

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

**ԼՈՒՍԻԿ ՅՈՒՐԻԿԻ ՎԱՐՂԱՆՅԱՆ**

**ՊԱՅՄԱՆ ԱՐՏԱՀԱՅՏՈՂ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ  
ԻՄԱՍՏԱԳՈՐԾԱՌԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ**

**Ժ.02.07- «Գերմանական լեզուներ» մասնագիտությամբ  
բանասիրական գիտությունների թեկնածուի  
գիտական աստիճանի հայցման ատենախոսության**

**ՍԵՂՄԱԳԻՐ**

**ԵՐԵՎԱՆ – 2013**

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ մ.գ.թ., դոցենտ Ս. Ա. Ազիզյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ բ.գ.դ., պրոֆ. Գ. Ռ. Գասպարյան  
բ.գ.թ., դոցենտ Ն. Ռ. Սկրյան

Առաջատար կազմակերպություն՝ Հայ-ռուսական (սլավոնական) համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2013թ. դեկտեմբերի 6-ին, ժամը 16:00-ին ՀՀ ԲՈՅ-ի՝ ԵՊՀ-ում գործող «Գերմանական լեզուներ» 009 մասնագիտական խորհրդի նիստում (0025, Երևան, Ալեք Մանուկյան 1):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2013 թ. նոյեմբերի 5-ին:

Մասնագիտական խորհրդի  
գիտական քարտուղար,  
բ.գ.դ., պրոֆեսոր՝



Ե.Լ. Երզնկյան

**Chapter two** deals with the examination and classification of syntactically marked conditional structures, which need to be treated as specific constructions inasmuch as they convey conditional contingency in many different ways. Both original and juxtaposed constructions showcase the amazing human ability to make rich and flexible connections between things whose connection is minimally specified. And the more minimal the meaning actually expressed by the lexical forms, the more specific the meaning and interpretation of the construction need to be.

**Chapter three** is concerned with the classification of conditionals based on the functional contribution of the conditional clause to the meaning of the conditional as a whole. Our classification is based on Fauconnier's Mental Space Theory, which provides a simple mechanism to set up different kinds of mental spaces. A specific type of mental space is built by the conditional marker *if*. According to the main functions of the conditional clause, three main mental spaces have been set up for this analysis: actualization space, epistemic space, and speech-act space.

**Chapter four** analyses syntactic and semantic integration of a conditional clause into its head clause. The different degrees of syntactic integration have been determined by clause order and by the compatibility or incompatibility of the anaphoric pronoun *then*. As regards semantic integration, the integration degree may vary depending mainly on the type of negation and question in the main clause.

**The Conclusion** presents the main outcomes of the research.



Պայմանի հարաբերությունն արտահայտող կառույցներն անմիջականորեն արտացոլում են մարդու՝ երկընտրական իրավիճակների շուրջ դատողություններ անելու կարողությունը, այն է՝ եզրակացություններ ու հետևություններ անելու լիակատար և ոչ լիակատար փաստերից, արտակա և ներակա տեղեկատվությունից, տարբեր իրավիճակների միջև հնարավոր հարաբերակցություն ենթադրելու և հասկանալու այն փոփոխությունները, որոնք պայմանավորված են այդ հարաբերակցությունների տարբերությամբ: Պայմանի տարբեր հարաբերություններ կառուցելու և դրանք յուրովի մեկնաբանելու կարողությունն անշուշտ վկայում է մարդկային մտքի խորաթափանցության և ներըմբռնման մասին: Այս կարողությունն իր հերթին խթանում է բազմաբնույթ իմացական պրոցեսներ վերլուծելու և վերծանելու, ինչպես նաև դատողություններ կատարելու նոր ռազմավարություններ մշակելու և զարգացնելու գործընթացը:

Ինչպես յուրաքանչյուր լեզվական երևույթ, այնպես էլ պայման արտահայտող կառույցները քննելիս անհրաժեշտ է կառուցել նրա ընդհանրական կաղապարը, որը հիմք է դառնում վեր հանելու հնարավոր կառուցվածքները: Վերջիններս իրականացվում են խոսքային ակտերի մեջ, որոնցում մեծ է արտալեզվական իրականության դերը, այսինքն՝ բազմաբնույթ պայմանահետևանքային հարաբերությունների հարաբերակցումը խոսքային իրադրությանը և այդ իրադրության համատեքստին: Այստեղ կարևոր է նաև խոսքային այն միջոցների քննությունը, որոնք կիրառվում են խոսողի կողմից՝ խոսակցի վրա ներգործություն կատարելու նպատակով: Այսպիսով, պայմանահետևանքային հարաբերությունները և՛ օբյեկտիվ-հաղորդային, և՛ սուբյեկտիվ-հաղորդակցային<sup>1</sup> բնույթի են: Թափանցելով լեզվի իմաստային կառուցվածքի մեջ՝ այս հարաբերությունները մակերեսային կառուցվածքից անցնում են դեպի խորքային կառուցվածք, որտեղ լեզվի կառուցվածքի առանձնահատկությունների բացահայտման գլխավոր սկզբունքները՝ ճշգրտությունն ու օբյեկտիվությունը, խիստ հարաբերական են:

Սույն ատենախոսության **ուսումնասիրության առարկան** պայմանի հարաբերությունն արտահայտող կառույցների համակողմանի քննությունն է իմաստա-գործաբանական լեզվաբանության դիրքերից:

Աշխատանքի **նպատակն** է բացահայտել պայման արտահայտող կառույցների իմաստակառուցվածքային և գործաբանական առանձնահատկությունները և կատարել դրանց քննությունն ու

<sup>1</sup>«Օբյեկտիվ-հաղորդային» և «սուբյեկտիվ-հաղորդակցային» տերմինները Գ. Ջահուկյանինն են: Տե՛ս «ժամանակակից հայերենի տեսության հիմունքները» Երևան, 1974, էջ 23:

դասակարգումը ըստ ստորադաս բաղադրիչի գործառնության, ըստ բաղադրիչների իմաստային հարաբերությունների արտահայտման բնույթի և միջոցների, ինչպես նաև ըստ շարահյուսական կառուցվածքի և շարադասության քերականական, իմաստային և ոճական գործառնությունների:

Սույն նպատակը իրագործելու համար առաջադրվել են հետևյալ **խնդիրները`**

1. հիմնավորել և առանձնացնել տարբեր շարահյուսական կառուցվածքներով և շարադասական գործառնությամբ օժտված պայման արտահայտող կառույցներն ըստ տեսակների և ենթատեսակների,
2. կատարել պայմանի հարաբերություն արտահայտող կառույցների դասակարգում ըստ ստորադաս բաղադրիչի գործառնության և ըստ բաղադրիչների իմաստային հարաբերությունների արտահայտման բնույթի և միջոցների,
3. բացահայտել բուն պայման հատկորոշող և բուն պայման չհատկորոշող ստորադասով կառույցների **իմաստակառուցվածքային** և գործաբանական առանձնահատկությունները,
4. որոշել ստորադաս և գերադաս բաղադրիչների շարահյուսական փոխկապակցության բնույթն ու իմաստային փոխկախվածության աստիճանը,
5. առանձնացնել «if» ստորադասական շաղկապի իմաստաբանական և գործաբանական առանձնահատկությունները:

Այս խնդիրներն իրագործելու համար կիրառվել են լեզվաբանական հետազոտության մի շարք արդյունավետ **մեթոդներ`** կադապարման, փոխակերպման, նկարագրական, զուգադրման և համատեքստային վերլուծության:

Առենախոսության **արդիականությունը** հիմնավորվում է նրանով, որ ժամանակակից լեզվաբանությունը կարիք ունի լեզվական իրողությունների իմացաբանական և գործաբանական վերլուծության: Պայման արտահայտող կառույցներն անգլերենում մինչև այժմ չեն ենթարկվել բազմակողմանի ուսումնասիրության, մասնավորապես գործաբանական լեզվաբանության դիրքերից: Պայման արտահայտող կառույցներին նվիրված նախորդ հետազոտություններում առանցքային կարևորություն են ներկայացրել այս կառույցների ավանդական կադապարները, իսկ նրանց դասակարգումը հիմնականում կատարվել է ըստ բաղադրիչների ստորոգյալների եղանակային և ժամանակային ձևերի հարաբերակցության և ըստ ստորադաս բաղադրիչում արտահայտված պայմանի տեսակի և բնույթի:

**THE SEMANTIC AND FUNCTIONAL PECULIARITIES OF CONDITIONAL CONSTRUCTIONS IN MODERN ENGLISH**

**SUMMARY**

Conditional (if-then) constructions directly reflect the human ability to reason about alternative situations, to make inferences based on incomplete or implicit information, to imagine possible correlations between situations, and understand how the world would change if certain correlations were different. Conditionals are an area of language use where the interaction of form, meaning, and context is exceptionally complex and fascinating. Their linguistic form has been an object of interest in a whole range of fields, including syntax, semantics, pragmatics, discourse, language acquisition, and history of language. This is because conditionals have an imposing variety of forms, and still more overwhelming variety of interpretations.

**The objective** of the research is the comprehensive study of the semantic and functional peculiarities of conditional constructions from cognitive and pragmatic perspectives. In this approach it is not satisfactory to simply document the various meanings of conditionals. Instead, we need to discover the parameters of conditional meaning as well as the parameters of conditional form and see how they correlate. It is through this type of analysis that we can discover what different conditionals share in meaning and form and thus reveal both similarities and differences.

**The novelty** of the research consists in creating a unified analysis of conditionals within a form-meaning framework, which aims at providing an explanation of how aspects of conditional form give rise to a variety of meanings that conditional sentences express. In the present paper for the first time an attempt has been made to represent a detailed examination of conditionals from a completely different perspective, that of the function served by conditional clauses in discourse. The novelty of the research is also provided by surveying the different syntactic forms a conditional sentence can take and classifying them according to syntax and clause order.

The thesis comprises an introduction, four chapters, a conclusion, and a bibliography.

**Introduction** defines the subject and the main objectives of the research. It presents the novelty, the theoretical and practical value, as well as the structure of the paper.

**Chapter One** dwells upon different classifications of conditionals based on various theories and approaches related to the topic of the research. It also investigates the semantic and pragmatic meanings of the conditional marker *if*.

дискурсе. Новизна исследования обеспечивается также изучением различных синтаксических форм, применяемых в условных предложениях и их классификацией в соответствии с синтаксисом предложения и его актуальным членением.

Диссертация состоит из введения, четырех глав, заключения и библиографии.

**Введение** определяет предмет и основные задачи исследования. В нем обоснована новизна, теоретическая и практическая значимость исследования, а также представлена структура работы.

**В первой главе** подробно анализируются различные классификации условных конструкций, отражающие принципы и методы синтаксического анализа разных лингвистических направлений и школ. В ней также рассматривается семантическое и прагматическое значение условного маркера “if”.

**Вторая глава** посвящена исследованию и классификации синтаксически маркированных условных конструкций, которые рассматриваются как специфические, способные к выражению условной зависимости множеством различных способов. Первоначальные условные конструкции и их вариации выражают способность человека находить связь между явлениями, даже если эта связь выражена слабо. И чем слабее значение, выраженное лексическими формами, тем специфичнее интерпретации значения конструкции в целом.

**В третьей главе** рассматривается классификация условных конструкций с точки зрения функционального значения условного предложения, влияющие на значение условной конструкции в целом. Предлагаемая нами классификация, основанная на теории ментальных пространств Ж. Фоконье, предусматривает простой механизм формирования разных видов ментальных пространств. Один из специфических видов ментальных пространств формируется при помощи условного маркера “if”. Исходя из основной функции условного предложения, разработаны три вида ментальных пространств: пространство актуализации, эпистемическое пространство и пространство речевых актов.

**В четвертой главе** анализируется синтаксическое и семантическое сплетение придаточного условного предложения с главным предложением. Разные степени синтаксических связей зависят от последовательности предложений, а также от совместимости и несовместимости анафорического местоимения “then”. Что касается семантических связей, то степень интегрирования может варьироваться в зависимости от типа отрицания и вида вопроса в главном предложении.

**В заключении** приведены основные выводы исследования.

Ատենախոսության **գիտական նորույթն** այն է, որ առաջին անգամ փորձ է արվում կատարելու պայման արտահայտող կառույցների դասակարգումն ըստ շարահյուսական կառուցվածքի և ըստ շարահասության քերականական, իմաստային և ոճական գործառնությունների: Փորձ է արվում նաև կատարելու պայմանի հարաբերությունն արտահայտող կառույցների դասակարգում և ձևաիմաստային քննությունն գործաբանության տեսության դիրքերից՝ ըստ ստորադաս բաղադրիչի գործառնության և ըստ բաղադրիչների իմաստային հարաբերությունների արտահայտման միջոցների: Առաջին անգամ քննության են առնվում նաև պայման արտահայտող կառույցների շարահյուսական և իմաստային առանձնահատկություններն ըստ բաղադրիչների փոխկապակցության բնույթի՝ առանձնացնելով շարահյուսական և իմաստային սերտ փոխկախվածության մեջ գտվող բաղադրիչներով կառույցներ:

Ուսումնասիրության **տեսական արժեքն** այն է, որ հետազոտության արդյունքները կարող են լրացնել այն բացերը, որ առնչվում են պայման արտահայտող կառույցների տարաբնույթ և բազմակողմանի դասակարգման և գործաբանական վերլուծության ոլորտում: Իրականացված հետազոտությունը կարող է հիմք ծառայել պայմանի հարաբերությունն արտահայտող կառույցների մասին գոյություն ունեցող բազում պատկերացումների և կարծրատիպերի գնահատման ու վերագնահատման, ինչպես նաև լեզվաբանական ու մեթոդական նոր մոտեցումների ձևավորման համար:

Աշխատանքի **գործնական արժեքն** այն է, որ ուսումնասիրության արդյունքները և արված եզրակացությունները կարող են օգտագործվել անգլերենի տեսական քերականության դասընթացներում, գործնական քերականության ուսուցման, ինչպես նաև կուրսային և ավարտական աշխատանքների իրականացման գործընթացում:

Չետազոտության համար **փաստական նյութ** են ծառայել COBUILD (Collins Birmingham University International Language Database)<sup>2</sup> լեզվական կորպուսի կողմից առաջադրված լեզվական փաստերն ու գործածության հաճախականության տվյալները, ինչպես նաև գեղարվեստական գրականությունից և բառարաններից քաղված օրինակները: Նյութի

<sup>2</sup> COBUILD (Collins Birmingham University International Language Database) կորպուսը պարունակում է մոտավորապես 4,5 միլիարդ բառ բոլոր գործառնական ոճերից: Կորպուսը տրամադրում է թարմ տեղեկատվություն, որովհետև թարմացվում է ամեն ամիս:

ներկայացումը և դասակարգումն ավելի ակնառու դարձնելու նպատակով կազմվել են համապատասխան աղյուսակներ և գծապատկերներ:

**Աշխատանքի կառուցվածքը և ծավալը:** Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, չորս գլուխներից (բաժանված ենթագլուխների), եզրակացություններից և օգտագործված գրականության (տեսական և գեղարվեստական) ցանկից:

**Ներածության** մեջ հիմնավորվում է ատենախոսության թեմայի արդիականությունն ու գիտական նորույթը, պարզաբանվում նպատակներն ու խնդիրները, ներկայացվում է հետազոտության տեսական ու գործնական արժեքը, ինչպես նաև՝ կիրառված մեթոդները:

**Առաջին գլխում («Պայման արտահայտող կառույցների դասակարգման և գործաբանական վերլուծության տեսական հիմքերը»)** ներկայացվում է պայման արտահայտող կառույցների տարբեր դասակարգումները, որոնք արտացոլում են տարբեր լեզվաբանական ուղղությունների և դպրոցների ըմբռնումները, շարահյուսական վերլուծության նրանց սկզբունքներն ու մեթոդները: Գլուխը ներկայացնում է նաև «if» ստորադասական շաղկապի իմաստաբանական և գործաբանական առանձնահատկությունները: Հետազոտության փիլիսոփայական և գործաբանական հիմքը կազմում է հնարավոր աշխարհների տեսությունը, Գրայսի համագործակցության սկզբունքը, հաղորդակցական չորս կարգախոսները, ընդհանրական և մասնավոր իմպլիկատուրաները, Լևինսոնի պարզ և բարդ իմպլիկատուրաները, ինչպես նաև Յորնի սանդղակը:

**Երկրորդ գլուխը («Տարբեր շարահյուսական կառուցվածքներով և շարադասական գործառույթներով օժտված պայման արտահայտող կառույցներ»)** բաղկացած է երկու ենթագլխից: **Առաջին ենթագլուխը («Պայման արտահայտող կառույցների տեսակներն ըստ շարահյուսական կառուցվածքի»)** ներկայացնում է պայմանահետևանքային և պատճառահետևանքային դրսևորումները տարբեր շարահյուսական կառուցվածքներով օժտված կառույցներում: Դիտարկվում են պարատակտիկ (բարդ համադասական) կառույցները, պայման արտահայտող բազմաբաղադրիչ բարդ կառույցները, ինչպես նաև գեղչված, թերի և ներակա ստորադասով կամ գերադասով կառույցները:

Հաշվի առնելով բաղադրիչների կապակցության և իմաստային հարաբերությունների արտահայտման քերականական միջոցները՝ համադասական շաղկապները, հնչերանգը, կապակցվող բաղադրիչների եղանակային և ժամանակային ձևերի հարաբերակցությունը և շարադասությունը, առանձնացրել ենք պարատակտիկ կառույցների 6 ենթատեսակ: Այս կառույցների առաջին ենթատեսակն առանձնանում և

ВАРДАНЯН ЛУСИК ЮРЬЕВНА

**СЕМАНТИЧЕСКИЕ И ФУНКЦИОНАЛЬНЫЕ ОСОБЕННОСТИ  
УСЛОВНЫХ КОНСТРУКЦИЙ В СОВРЕМЕННОМ АНГЛИЙСКОМ  
ЯЗЫКЕ**

Диссертация на соискание ученой степени кандидата филологических наук  
по специальности 10.02.07 – “Германские языки”

Защита состоится 6 декабря 2013 г. в 14:30 на заседании  
специализированного совета 009 - “Германские языки” ВАК РА при  
Ереванском государственном университете

**РЕЗЮМЕ**

Условные конструкции (если-то) непосредственно отражают присущую человеку способность рассуждать об альтернативных ситуациях, делать выводы на основе неполной или имплицитной информации, представить возможные корреляции между ситуациями и понять, как бы изменился мир, если бы некоторые из этих корреляций были бы разными. Условные конструкции - это область использования языка с исключительно сложным и увлекательным взаимодействием формы, смысла и контекста. Языковая форма условных конструкций является объектом исследования разных уровней языка, таких как синтаксис, семантика, прагматика, дискурс, история языка и пр. Такой интерес объясняется подчеркнутым разнообразием форм и еще большей выраженностью интерпретаций условных конструкций в языке.

**Целью** настоящей диссертационной работы является всестороннее изучение семантических и функциональных особенностей условных конструкций с когнитивно-прагматической точки зрения, а также выявление показателей условного значения и параметров условной формы с точки зрения их корреляции. Именно такой тип анализа дает возможность выявить сходства и различия условных конструкций в плане выражения и в плане содержания.

**Новизна** исследования заключается в разработке целостного анализа условных предложений с точки зрения их формы и содержания. Предложенный принцип анализа базируется на выявлении того, как аспекты условной формы влияют на различие в плане содержания, выражаемых условными предложениями. В настоящей работе впервые была предпринята попытка представить изучение условных конструкций с точки зрения функционирования условных предложений в

- մեկնական հարաբերություն արտահայտող պայմանական կառույցներում՝ հիշեցման, զգուշավորության կամ թույլ արտահայտված իմացության, գերադաս եզրի բովանդակության քանակական, որակական և իմաստային արժեքի նվազեցման կամ ժխտման, ինչպես նաև այդ արժեքի բարձրացման և զնախատման:
7. Պայման արտահայտող կառույցներում, բացի հարակցական ստորադասով կառույցներից, բաղադրիչ նախադասությունները գտնվում են շարահյուսական փոխկախվածության մեջ:
  8. Բաղադրիչ նախադասությունների շարահյուսական փոխկախվածության աստիճանը նույնը չէ: Այն կախված է բաղադրիչների շարադասությունից, ինչպես նաև մի շարք լեզվական և արտալեզվական բնույթի պայմաններից, որոնցում իրագործվում է տվյալ խոսքային ակտը:
  9. Պայման արտահայտող ոչ բոլոր կառույցներում են բաղադրիչները գտնվում իմաստային սերտ փոխկախվածության մեջ: Պարտադիր ստորադասով կառույցներն այն անմասնատունակ կառույցներն են, որոնցում բաղադրիչները անբաժանելիորեն կապված են միմյանց հետ:
  10. Բաղադրիչ նախադասությունների իմաստային փոխկախվածության աստիճանը կանխորոշվում է նաև գերադաս բաղադրիչում նշված ժխտման և հարցման բնույթով:

Չետագոտության հիմնադրույթներն արտացոլված են հետևյալ հրապարակումներում՝

1. Conditionals as a Category // Կանթեղ, # 3(40), Երևան, «Ասողիկ» հրատ., 2009, էջ 145-155:
2. Պայմանի հարաբերություն արտահայտող կառույցների տեսակները ըստ ստորադաս բաղադրիչի գործառության // «Նոր միտումներ լեզվի և մտքի ուսումնասիրության մեջ» հանրապետական գիտաժողովի նյութեր, Վանաձոր, «ՍԻՍ տպագրատուն», 2011, էջ 56-67:
3. Պայմանի հարաբերություն արտահայտող բարդ համադասական կառույցներ // Գիտական հոդվածներ (բանասիրություն), Վանաձոր, «Սին տպագրատուն», 2013, էջ 182-196:
4. Պայման արտահայտող բազմաբաղադրիչ բարդ կառույցներ // Գիտական հոդվածներ (բանասիրություն), Վանաձոր, «Սին տպագրատուն», 2013, էջ 197-206:

բնորոշվում է նրանով, որ բաղադրիչների իմաստային կառուցվածքում առկա է և՛ ներհակություն, այսինքն՝ բաղադրիչներն իրենց ներքին տրամաբանությամբ և իմաստներով հակադրվում են իրար կամ բացառում են միմյանց, և՛ պայմանահետևանքային հարաբերություն: Կապակցությունն իրացվում է «or» շաղկապով, որն ունի զեղչված պայմանի պարագա ստորադաս նախադասության արժեք: Օրինակ՝

Keep still, you little devil, or I'll cut your throat! [Ch. Dickens, 4]

Պարատակտիկ կառույցների երկրորդ ենթատեսակը պայմանահետևանքային հարաբերության հիմքի վրա «and» շաղկապով կազմված համադասական կառույցներ են:

Hold yourself dearly, however unworthy, and you will be respected.

[Th. Dreiser, 90]

Պարատակտիկ կառույցների երրորդ տեսակը պայմանահետևանքային հարաբերության հիմքի վրա «and» և «or» շաղկապներով կազմված համադասական կառույցներ են, որոնց երկու բաղադրիչները պատմողական նախադասություններ են:

You'll stop that picture, and you'll not see that fellow again: he's in love with you. [J. Galsworthy, 104]

Կառուցվածքային տեսակետից չորրորդ ենթակառույցը բնութագրվում է նրանով, որ բաղադրիչներից առաջինը թվական լրացումով կազմված գոյականական բառակապակցություն է:

“One more word from that direction,” she said threateningly, “and I'll call the Policeman.” [P. L. Travers, 14]

Պարատակտիկ կառույցների հինգերորդ տեսակը տարբերվում է մյուս տեսակներից նրանով, որ երկու բաղադրիչներն էլ գոյականական բառակապակցություններ են՝ համակցված «or» շաղկապով:

Your money or your life!

Այս կառույցները կարող են լինել նաև աննշույթ: Կապակցության բառական միջոցների բացակայության դեպքում բաղադրիչների միջև իմաստային առումով պետք է ո՛չ միայն պայմանահետևանքային իրական կապ լինի, այլև այդ կապը պետք է արտահայտված լինի լեզվի ներքին տրամաբանությամբ, որպեսզի չստացվի անկապ, անտրամաբանական նախադասություն: Շարահարական կապակցության դեպքում կախյալ եզրը օրինակափորձեն նախադաս է. այլ մի դասավորություն չկա:

“Think about it. Do it slow. You run into any kind of trouble, think slow and you'll make out okay...” [J. Raban, 45]

Բազմաբաղադրիչ բարդ նախադասությունների դասակարգման հիմքում ընկած է ստորադաս եզրերի՝ միմյանց և գլխավոր եզրի կամ եզրերի

հանդեպ ունեցած շարահյուսական հարաբերությունների բնույթը՝ ստորադասությունը և համադասությունը: Ելակետ ունենալով բազմաբաղադրիչ բարդ ստորադասական նախադասության եզրերի միջև եղած շարահյուսական հարաբերությունների ընդհանրություններն ու տարբերությունները՝ պայման արտահայտող կառույցներում նկատում ենք հետևյալ կապակցությունները՝

ա) գերադասի հետ ստորադասի հատուկ շարահյուսական կապով

If you will get me a copy of that pancake recipe, I give you my word I'll never call upon her again. [O. Henry, 50]

բ) ենթաստորադասությամբ

If Jerry accepts the job if he is offered it, then his Mum will be delighted.

[COB-W]

գ) համաստորադասությամբ

If you attempt any treachery or fail to comply with our demand as stated, you will never see your boy again. [O. Henry, 202]

դ) հանրաստորադասությամբ

1) If you eat so fast you'll have indigestion, and then you won't be able to act well. [S. Fitzgerald, 114]

Պայմանահետևանքային հարաբերություններ կարող են արտահայտվել նաև շարահյուսորեն թերի նախադասություններում, որոնցում զեղչված է կամ ստորադաս բաղադրիչը, կամ գերադասը: Պայմանի հարաբերություն արտահայտող այս նախադասությունները կառուցվածքային տեսակետից ամբողջական չեն, բայց նրանք թեթևացնում են խոսքը՝ ազատելով այն կրկնաբանությունից: Շարահյուսորեն թերի կառույցներն այնքան լայն կիրառություն ունեն, որ զեղչված ստորադաս բաղադրիչները՝ «if possible», «if it were necessary», «if need be», «if I were you», «if you don't mind», և այլն, միշտ չէ, որ հարկ է լինում վերականգնել:

“What is it you would like to do?” he said. “Maybe you have some cleaning or scrubbing,” she replied, timidly. “I could wash the floors.” [Th. Dreiser, 20]

(I could wash the floors. = I could wash the floors if you asked me to / if you want me to/if I was allowed to/ if I had a chance to, etc.)

Որոշ դեպքերում պատասխանը տրվում է պայմանի պարզապես ստորադաս նախադասությամբ, որը կապված է ընթացիկ խոսքի հետ և, որքան էլ այն համառոտ լինի, անմիջապես հասկացվում է, քանի որ այն կամ նախորդ ասվածի մասն է կազմում, կամ էլ մտքի շարունակությունն է: Նման պատասխաններում տրամաբանական շեշտն ընկնում է «if» բառի վրա, որը պատասխանի համար էական նշանակություն ունեցող բառ է. այն

հմաստաբանության տեսանկյունից բավարար պայմանը իմաստային հենք է, որի վրա կառուցվում է ամբողջ նախադասությունը:

2. «If» ստորադասական շաղկապի երկու գործաբանական իմաստները՝ անորոշության և անհրաժեշտության իմպլիկատուրաները, հաղորդակցության իրավիճակից բխող կանխենթադրույթներ են և հեշտությամբ հերքվում են, երբ տվյալ համատեքստում դառնում են անհամատեղելի և անտրամաբանական:
3. Շարահյուսությունը կարևոր դեր է կատարում պայման արտահայտող կառույցների համակարգում: Շարահյուսության քերականական, իմաստային և ոճական գործառույթներով են պայմանավորված միևնույն պայմանահետևանքային հարաբերության տարբեր դրսևորումներն ու մեկնաբանությունները:
4. Փոխակերպումը վճռորոշ դեր ունի տարբեր շարահյուսական կառուցվածքներով օժտված կառույցների իմաստագործառական և գործաբանական առանձնահատկությունների բացահայտման մեջ:
5. Բուն պայման հատկորոշող ստորադասով կառույցներում բաղադրիչների միջև ձևավորվում են հետևյալ իմաստային հարաբերությունները՝
  - առկայացնող պայման արտահայտող կառույցներում՝ պատճառական, նպատող, խոչընդոտող և չխոչընդոտող,
  - ուղղակի հետևության հիմունք հատկորոշող կառույցներում՝ սահմանափակող, զիջական, էպիստեմիկ և շրջուն պատճառահետևանքային,
  - անուղղակի հետևության հիմունք հատկորոշող կառույցներում՝ իսկությանը չհամապատասխանող և հակասական:
6. Բուն պայման չհատկորոշող ստորադասով կառույցները խոսքում ունեն լայն կիրառություն, իրականացնում են բազմաբնույթ իմաստային, ոճական գործառույթներ և բնորոշվում են մեկնական, արտահայտչական և գնահատողական երանգներով: Այս կառույցներում բաղադրիչների միջև ձևավորվում են հետևյալ իմաստային հարաբերությունները՝
  - համեմատության հարաբերություն արտահայտող պայմանական կառույցներում՝ համարժեքության, անհամարժեքության, համեմատություն աստիճանավորող, հարափոխաբերական և հարատարածական,



Ակտուալ տրոհմամբ պայման արտահայտող կառույցների մեկ այլ ենթատեսակ է, «it is that» ներդիր պարունակող գերադաս բաղադրիչով կառույցները: Այս կառույցներում նույնպես գերադաս բաղադրիչը իմաստային ինքնուրույնություն չունի և պահանջում է բացահայտում համապատասխան ստորադասով:

If there has been an explosion, it's that the workers have not taken the necessary precautions. [COB-W]

Իմաստային սերտ փոխկախվածությամբ առանձնանում են նաև կիսանվանական ստորադասով պայման արտահայտող կառույցները, որոնցում ստորադաս բաղադրիչը միաժամանակ կատարում է երկու գործառույթ՝ պայմանի պարագայի և ենթակայի կամ ուղիղ խնդրի: Մենք գտնում ենք, որ այս կառույցները նույնպես համարվում են իմաստային սերտ փոխկախվածության մեջ գտնվող բաղադրիչներով կառույցներ, քանի որ և՛ գերադաս բաղադրիչը և՛ ստորադաս բաղադրիչը փոխադարձաբար կախված են մեկը մյուսից: Օրինակ՝

Do you mind if I move the candle? It is a bit bright here. [G. Greene, 80]

(= If I move the candle, do you mind my doing so?)

Ստորադաս և գերադաս բաղադրիչները գտնվում են իմաստային սերտ փոխկախվածության մեջ նաև հարակրկնություն պարունակող գերադասով կառույցներում: Գերադաս բաղադրիչում անձնական և այլ դերանունների գործածությունը ակնարկում է նախադաս ստորադաս բաղադրիչի որևէ անդամի կամ երկու բաղադրիչ նախադասությունների համար ընդհանուր անդամի առկայությունը: Օրինակ՝

If you have come here to thank, it was not necessary. [Ch. Dickens, 316]

Ստորադաս և գերադաս բաղադրիչների շարահյուսական և իմաստային փոխկապակցության բնույթն ու փոխկախվածության աստիճանը որոշելու նպատակով սույն ենթագլուխը քննության է առնում նաև գերադաս բաղադրիչում նշված ժխտման բնույթը (նկարագրական, հարալեզվական) և հարցական գերադասով չորս կառույցները՝ հարցական գերադասով առկայացնող կառույց, հարցական գերադասով հետևության հիմունք հատկորոշող կառույց, հարցական գերադասով խոսողական ակտ կառույց և «Յոլդբրոֆֆ» պայմանական կառույց:

**Եզրակացություն** մեջ ամփոփվում են աշխատանքի հիմնական արդյունքները:

1. Ե՛վ նախադասության և՛ ասույթային մակարդակում, անկախ ստորադաս բաղադրիչի արտահայտած գործառույթից, «if» ստորադասական շաղկապն ապահովում է բավարար պայման գերադաս բաղադրիչի գործողության կամ եղելության համար:

վերապահումով արտահայտում է խոսակցի կասկածը և անվստահությունը ասվածի ճշմարտացիության վերաբերյալ:

“ Well, for a start, I wouldn't mind knowing which of those two newspapers McClure read first.” “If either.” [C. Dexter, 172]

Նախադասության պատասխանից պարզ երևում է, որ խոսակիցը կասկածում է կամ նույնիսկ բացառում գերադաս բաղադրիչում ներկա կանխենթադրույթի ճշմարտացիությունը՝ «McClure read both papers»:

Իրենց շարահյուսական կառուցվածքով առանձնանում են նաև թերի ստորադասով կամ թերի գերադասով պայման արտահայտող կառույցները: Նրանք ունեն լայն գործածություն, որովհետև նախադասությունները լրիվ արտահայտելու դեպքում խոսքը հաճախ կորցնում է իր դիպուկությունը, արտահայտչականությունը և դառնում է միալար, կրկնվող ու ձգձգված: Օրինակ՝

Are you pressed for time, Mr. Bayliss? If not, I suggest we have lunch.

[COB-W]

(If not = If you are not pressed for time) (թերի ստորադասով կառույց)

Ինչպես տեսնում ենք վերը նշված օրինակից, խոսողը, փոխանակ ամբողջ նախադասությունը կրկնելու, միայն թերի ստորադաս նախադասությունն է նշում՝ հաղորդելով «not» բառին կարևորություն և արտաբերելով այն այնպիսի հնչերանգով, որ ամբողջ նախադասությունը հասկացվում է:

Սակայն կան թերի պայմանի պարագա ստորադաս նախադասություններ, որոնք պահանջում են տարբեր մեկնաբանություններ և բացատրություններ: Օրինակ՝

The Queen of England is happy, if not ecstatic. [COB-W]

Այս կառույցն իր բնույթով հարալեզվական է. թերի ստորադաս բաղադրիչը վերաբերում է և արձագանքում գերադաս բաղադրիչի որևէ անդամին՝ հանդիսանալով այդ անդամին փոխարինող, փոխլրացնող տարբերակ, կամ պոտենցիալ՝ հնարավոր ճշտում կամ ուղղում: «Ecstatic» և «happy» բառերը կարծես թե նույն իմաստային սանդղակի վերին և ստորին եզրերն են: Վերը նշված նախադասությունը՝ թերի ստորադասով և վերականգնված ստորադասով, հնարավոր է ունենան իմաստային որոշ տարբերություններ:

The Queen of England is happy, if she is not ecstatic.

Այս նախադասությունը երկիմաստ է, քանի որ ունի հնարավոր երկու մեկնաբանություն՝ հարալեզվական և զիջական: Ըստ նախադասության հարալեզվական վերլուծության՝ խոսողը գտնում է, որ «happy» բառը շատ հարմար է թագուհու էնոցիոնալ վիճակը նկարագրելու համար, բայց

միաժամանակ զգուշորեն և նրբանկատորեն նշում է նաև «ecstatic» բառը որպես երկընտրանք՝ համոզված չլինելով «ecstatic» բառի տեղին գործածության մեջ: Չնայած նրան, որ «ecstatic» բառին նախորդում է «not» ժխտական մասնիկը, բառը չի ժխտվում, այլ, ընդհակառակը, այն խոսակցին կամ ընթերցողին հնարավորություն է տալիս նույն իմաստային սանդղակի ստորին եզրից (happy) բարձրանալ մինչև վերին եզրը (ecstatic): Ըստ նախադասության զիջական վերլուծության՝ «ecstatic» բառը ժխտվում է, այսինքն՝ խոսողն ակնկալում էր, որ թագուհին կունենա այդ հոգեկան զգացողությունը, բայց սխալվում է: Արդյունքում ընթերցողը սահմանափակվում է սանդղակի ստորին եզրով (happy):

Ներակա պայման արտահայտող կառույցներն առանձնանում են իմաստակառուցվածքային և գործաբանական առանձնահատկություններով: Ներակա պայման արտահայտող կառույցը և նրա փոխակերպված տարբերակը՝ պայմանի պարագա ստորադասով բարդ ստորադասական նախադասությունը, թեև մտքի արտահայտման զուգահեռ ձևեր են, որոշ իմաստով նույնական, բայց այդ նույնությունը բացարձակ չէ, այլ պայմանավորված է դրանց կառուցվածքային և ոճական տարաբեկությամբ: Այլ կերպ՝ երկու նախադասությունների առարկայական բովանդակությունը նույնն է, սակայն տարբեր են արտահայտության եղանակները և լեզվի երկու կարևորագույն գործառնությունների՝ մտածողության միջոցի և հաղորդակցության միջոցի իրականացման և դրսևորման եղանակները: Օրինակ՝

You are entitled to a free gift whether you accept our offer of insurance or not.

[COB-W]

«Whether...or» շաղկապների գործաբանական առանձնահատկությունն այն է, որ իրենց մեջ ներառում են միաժամանակ երկու պայման՝ «You are entitled to a free gift if you accept our offer of insurance» + «You are entitled to a free gift if you don't accept our offer of insurance»: Իմաստակառուցվածքային տեսանկյունից կարևորվում է այս երկու նախադասությունների ճիշտ կապակցումը, որը, մեր կարծիքով, հնարավոր է երկու եղանակով՝ մի կողմից «both...and» միավորիչ շաղկապներով, մյուս կողմից «either...or» տրոհական շաղկապներով: Արդյունքում ստանում ենք իմաստակառուցվածքային հարաբերությունների երկու տեսակի համակցում՝

ա) պայմանահետևանքային հարաբերություն + բաղիյուսական հարաբերություն

You are entitled to a free gift both if you accept our offer of insurance and if you don't.

բ) պայմանահետևանքային հարաբերություն+ տրոհական հարաբերություն

Իմաստային շառավիղն ընթանում է բարձրագույնից դեպի նվազագույնը: Համաձայն Բոլինջերի տեսության՝ հաղորդվող նյութի իմաստային շառավիղի նվազագույն կետը բովանդակում է «տեսակավորող կամ ընտրողական հակադրություն»: Բոլինջերի՝ նախադաս և վերջադաս ստորադաս բաղադրիչների իմաստային տարբերակման այս գաղափարը թույլ է տալիս կիրառելու նույն սկզբունքը պայմանի հարաբերություն արտահայտող կառույցներում:

ա) If you come I'll help you.

բ) I'll help you if you come.

Չնայած այս երկու նախադասություններն ունեն նույն չեզոք հնչերանգը, նրանք բավականին տարբեր են իմաստային հարաբերություններ արտահայտելու տեսակետից: Եթե քննարկվող կառույցներին մոտենանք Բոլինջերի տեսության դիրքերից, ապա դժվար չէ նկատել, որ նախադասություններից առաջինում ստորադաս բաղադրիչն իր արտահայտած իմաստով ինչ-որ չափով նմանվում է հրավերի, ինչը չենք կարող ասել վերջադաս երկրորդականի մասին: Ըստ Բոլինջերի «ընտրողական հակադրություն» տեսության՝ երկրորդ նախադասությունը կարելի է մեկնաբանել այսպես՝ «Ես քեզ կօգնեմ հետևյալ դեպքում՝ եթե դու գաս: = Ես քեզ կօգնեմ, միայն եթե դու գաս»:

**Չորրորդ զվխի երկրորդ ենթազույգը («Իմաստային սերտ փոխկախվածության մեջ գտնվող բաղադրիչներով կառույցներ») քննության է առնում պարտադիր ստորադասով կառույցները: Նման կառույցներում բաղադրիչ նախադասությունները փոխադարձ կախվածության մեջ են գտնվում: Նման անմասնատունակ կառույցներ են ստեղծվում հետևյալ դեպքերում.**

Ստորադաս բաղադրիչը կապվում է գերադաս բաղադրիչի որևէ առանձին բառի կամ բառակապակցության հետ և կատարում նրա խոսքի մասային արժեքով թելադրված շարահյուսական այնպիսի պաշտոն, որն անհրաժեշտ է այդ բառի կամ բառակապակցության իմաստի բացահայտման համար: Առանց նման լրացման գերադասը իր քերականական կառուցվածքով թերակազմ է մնում, բովանդակությամբ՝ թերիմաստ:

The only reason I'd do that would be if you asked me to. [COB-W]

Պարտադիր ստորադասով կառույցներ են նաև ակտուալ տրոհմամբ պայման արտահայտող կառույցները, որոնցում «it» ներդիր պարունակող գերադաս բաղադրիչը ներկայացնում է հաղորդման միջուկը՝ ռեման, իսկ ստորադաս բաղադրիչը ներկայացնում է հաղորդման ելակետը՝ թեման:

If anyone was responsible for what had happened, it was Tanya herself.

[A. Hailey, 313]

Բերված օրինակից կարելի է նկատել, որ առարկայական աշխարհի եղելությունները ներկայացվում են իրենց բնական դրության մեջ և խոսողի կողմից դիտվում որպես իրական, ստույգ համարվող գործողություն կամ իրողություն: Կրկնության այսպիսի կիրառությունը ոճական մի յուրահատուկ հնարանք է և ունի հատուկ նպատակադրում՝ խոսքը ներկայացնել որպես իրականությանը համապատասխանող, առարկություն չվերցնող և հավաստի: Հրավիրելով հաղորդակցի ուշադրությունը նախադասության կրկնված հատվածի վրա՝ խոսողը կարծես փորձում է խոսակցին ազատել ավելորդ անհամապատասխանից ու լարվածությունից՝ խորհուրդ տալով իրողություններն ընդունել իրենց բնական ընթացքով:

**Ատենախոսության չորրորդ գլուխը («Պայման արտահայտող կառույցների շարահյուսական և իմաստային առանձնահատկություններն ըստ բաղադրիչների փոխկապակցության բնույթի»)** անդրադառնում է պայմանի հարաբերություն արտահայտող կառույցներում բաղադրիչների փոխադարձ կապին, որը կարող է լինել սերտ և համեմատաբար ոչ սերտ: Գլուխը բաղկացած է երկու ենթագլխից:

**Չորրորդ գլխի առաջին ենթագլուխը («Շարահյուսական սերտ փոխկախվածության մեջ գտնվող բաղադրիչներով կառույցներ»)** ուսումնասիրում է մասնատունակ և անմասնատունակ պայման արտահայտող կառույցները և որոշում բաղադրիչների շարահյուսական փոխկապակցության բնույթը բուն պայման հատկորոշող և բուն պայման չհատկորոշող ստորադասով կառույցներում: Բաղադրիչների շարահյուսական փոխկապակցության բնույթն ու սերտության աստիճանը որոշել ենք ըստ բաղադրիչների շարահասության և «then» բառի համատեղելիությամբ կամ անհամատեղելիությամբ: Ստորադաս բաղադրիչը գերադասի հանդեպ հիմնականում զբաղեցնում է նախադաս դիրք, որը պայմանավորված է պայմանի և հետևանքի իրադրական հատկությամբ, որն էլ ապահովում է «հաղորդակցական դինամիզմը»: Մեր կատարած ուսումնասիրության հիմքում ընկած է Բոլինգերի «զային ձևափոխություն» տեսությունը, որը նա բնութագրում է որպես «իմաստային նեղացում կամ սահմանափակում»: Անդրադառնալով նախադասության իմաստային կողմին՝ Բոլինգերը գրում է. «Միտք արտահայտելու համար նախադասության մեջ կիրառված բառերը ոչ միայն պետք է գործածված լինեն որոշակի ձևերով, այլև պետք է դասավորված լինեն որոշ հաջորդականությամբ: Նախադասության մեջ գործածվող յուրաքանչյուր բառ փոքրացնում է իրեն նախորդող բառի «իմաստային շառավիղը», որի արդյունքում նախադասությունը սկսող բառերը ունենում են հնարավոր ամենամեծ իմաստային շառավիղը, որը զնալով նվազում է» [Bolinger 1965:279]: Ասվածից կարելի է եզրակացնել, որ նախադասության

You are entitled to a free gift either if you accept our offer of insurance or if you don't.

**Երկրորդ գլխի երկրորդ ենթագլխում («Պայման արտահայտող կառույցների տեսակներն ըստ շարադասության քերականական, իմաստային և ոճական գործառույթների»)** հաշվի առնելով շարադասության իմաստատարբերակիչ դրսևորումները՝ առանձնացրել ենք պայմանի հարաբերություն արտահայտող հետևյալ կառույցները՝ կիսանվանական ստորադասով կառույցները, հարակցական ստորադասով կառույցները, ակտուալ տրոհմամբ կառույցները, ինչպես նաև շրջուն շարադասությամբ և անշաղկապ կապակցությամբ կառույցները:

Իրենց շարահյուսական գործառույթով առանձնանում են կիսանվանական ստորադասով պայման արտահայտող կառույցները, որոնցում ստորադաս բաղադրիչը միաժամանակ կատարում է երկու գործառույթ՝ պայմանի պարագայի և ենթակայի կամ ուղիղ խնդրի:

ա) It doesn't matter if you are not a particularly skilled gardener.

[COB-W]

Բերված օրինակում այնքան էլ հեշտ չէ որոշել գերադաս բաղադրիչի «it» դերանվան իմաստային գործառույթը, ինչպես նաև «if» շաղկապով ներմուծվող ստորադաս բաղադրիչի բնույթը: «It» դերանվան իմաստային երկու գործառույթներն ի հայտ են գալիս միաժամանակ, երբ ստորադաս բաղադրիչը բերում ենք նախադասության սկիզբ: Առաջադաս դիրք զբաղեցնելով՝ պայմանի պարագա ստորադաս բաղադրիչը հնարավոր է դարձնում զեղչված ենթակա ստորադաս նախադասության վերականգնումը, որի արդյունքում էլ ունենում ենք երկու ստորադաս նախադասություն՝ պայմանի պարագա ստորադաս նախադասություն, որը կապվել է գերադասի հետ «if» ստորադասական շաղկապով, և ենթակա ստորադաս նախադասություն, որը կապվել է գլխավորին «that» ստորադասական շաղկապով:

բ) If you are not a particularly skilled gardener, it does not matter that you are not a particularly skilled gardener.

Նախադասության (բ) տարբերակում «it» դերանունը հարակրկնություն է պայմանի պարագա ստորադաս նախադասության համար, իսկ մյուս կողմից էլ՝ ձևական ենթակա: Սակայն, ինչպես տեսնում ենք, նախադասության (բ) տարբերակը համարվում է անընդունելի երկարաբանության պատճառով, քանզի կրկնությունն արտահայտում է անաֆորիկ «it»-ը:

Ժամանակակից անգլերենում բավականին հաճախացել են պայմանի պարագա ստորադասով բարդ նախադասությունների բաղադրիչների մասնատման դեպքերը, այսինքն՝ այն դեպքերը, երբ վերջադաս ստորադասը հատուկ կերպով շեշտելու կամ ընդգծելու համար հնչեբանգով անջատվում է

իր գերադասից (գրավոր խոսքում դա արտահայտվում է ստորակետով կամ տրոհագծով) և անկախանում: Այս կառույցում վերջադաս պայմանի պարագա ստորադաս նախադասությունը, ձևականորեն խզելով շարահյուսական իր կապը գերադասի հետ, պահպանում է, սակայն, իր իմաստային կապը և այնուամենայնիվ ընկալվում այն շարահյուսական պաշտոնով, որ թելադրվում է կամ գերադաս նախադասության քերականական կառուցվածքով, կամ էլ ընդհանուր բովանդակությամբ և կապակցության միջոցով: Այս կարգի լրացուցիչ հաղորդումներ պարունակող ստորադաս բաղադրիչները բնականաբար ստանում են ընդգծված հարակցական նշանակություն, որպիսի բնորոշմամբ էլ նրանք արժեքավորված են անգլերեն քերականագիտության մեջ (postscript-P conditionals): Օրինակ՝

I'll drop in and see you at 10 tonight, if you will be alone. [G. Greene, 57]

Ինչպես գիտենք, շարադասությունը քերականական դերի հետ ունի նաև իմաստատարբերակիչ բազմազան դրսևորումներ, որոնցից նախ և առաջ պետք է խոսվի նախադասության ակտուալ տրոհման մասին, այսինքն՝ թեմայի և ռեմայի մասին՝ ելակետի և միջուկի մասին: Պայման արտահայտող կառույցներում միջուկի այդ ընդգծումը, շեշտումը իրականացվում է և՛ ստորադաս և՛ գերադաս բաղադրիչում՝ «it» ներդիրի օգնությամբ:

If it's war you want, I warn you I'll fight back. [M. Lide, 103]

If anyone was responsible for what had happened, it was Tanya herself.

[A. Hailey, 313]

Պայմանի պարագա ստորադաս նախադասության կապակցությունը գերադասի հետ կարող է իրացվել նաև առանց շաղկապի՝ շարահարությամբ, որն առավելապես հատուկ է գրական անգլերենին: Այն լայնորեն կիրառվում է գրական-գեղարվեստական աղբյուրներում, գիտահրապարակախոսական երկերում, մանուլում և խոսքը դարձնում ավելի պաշտոնական և քաղաքավարի:

***Աշխատանքի երրորդ գլխում («Պայման արտահայտող կառույցների դասակարգումն ու գործաբանական առանձնահատկություններն ըստ ստորադաս բաղադրիչի գործառության») կատարել ենք պայմանի հարաբերություն արտահայտող կառույցների դասակարգում և ձևաիմաստային քննություն գործաբանական լեզվաբանության դիրքերից՝ ըստ ստորադաս բաղադրիչի գործառության: Սույն դասակարգումը կատարել ենք հայտնի լեզվաբան Ֆոկոնյերի «մտավոր տարածքներ» տեսության հիման վրա: Համաձայն այս տեսության՝ ստորադաս բաղադրիչը կառուցում է պայմանական կամ ենթադրական տարածք, որում իրականանում է գերադաս բաղադրիչի գործողությունը, իրողությունը: Մտավոր տարածքների տեսությունը ապահովում է մի պարզ մեխանիզմ, որը թույլ է տալիս***

- հարատարածական

“Utah’s my sister. She can do better than me when I was her age, but my form is improving. I’m definitely better than Rhiannon. Want to see?” “Not today,” I said. “If Utah is your sister, are you Wyoming or Nevada?” [S. Paretsky, 75]

Այս օրինակում գերադաս նախադասությամբ արտահայտված հարցն իր մեջ բովանդակում է հեզմանք ու զարմանք. խոսողը տեղանունների միջոցով (Wyoming, Nevada) փորձում է գուշակել իր խոսակցի անունը՝ հիմնվելով այն իրողության վրա, որ այդ ընտանիքում ընդունված է երեխաներին անվանակոչել տեղանուններով:

Խոսողական ակտ պայմանական կառույցներում ստորադաս բաղադրիչը կարող է իրականացնել նաև մեկնական գործառույթ, այսինքն՝ ստորադաս բաղադրիչը բնորոշվում է իմաստային և ոճական, այդ թվում արտահայտչական-գնահատողական երանգներով, և մեկնաբանում, բացատրում կամ գնահատում է գերադաս բաղադրիչի գործողությունը կամ եղելությունը: Օրինակ՝

“You call me a lucky fellow. Of course, I am. I was a blacksmith’s boy but yesterday; I am – what shall I say I am – today?” “Say, a good fellow, if you want a phrase,” returned Herbert, smiling, and clapping his hand on the back of mine.

[Ch. Dickens, G.E., 248]

Այս կառույցները կարող են արտահայտել նաև հարալեզվական հարաբերություն, այսինքն՝ ստորադաս բաղադրիչի մեկնական, բացատրական հարաբերությունը վերաբերում է ոչ թե ամբողջ գերադաս բաղադրիչին, այլ նրա որևէ անդամին՝ դառնալով այդ անդամին փոխարինող, փոխլրացնող տարբերակ կամ հնարավոր ճշտում: Օրինակ՝

Each house – if that’s what you call something with twenty rooms and four chimneys – was set so far back behind trees and fences that you saw only fragments of facades and gables. [S. Paretsky, 71]

Խոսողական ակտ պայմանական կառույցների գերադաս բաղադրիչում երբեմն կրկնվում է այն, ինչ նշված է ստորադաս բաղադրիչում: Օրինակ՝

In brief, Joe thought that if I thought well of it, I thought well of it.

[Ch. Dickens, G.E., 112]

Սակայն նույնաբանություն լինելով համդերձ, այս կառույցը խոսողի՝ հաղորդման նկատմամբ ունեցած վերաբերմունքի դրսևորման մի յուրօրինակ ձև է:

If you are four you are four. But you will be five the next year, and six the year after that. And.....it only takes sixteen years to make you twenty.

[F. Burnett, 61]

բազմազանությամբ, ինչպես օրինակ՝ «if you are interested», «if you wouldn't mind telling me», «if it's not rude to ask», «if I might/could ask you to», «if I can speak frankly», «if I haven't already told you» և այլն: Այսպիսով, խնամքով և ճիշտ ընտրված արտահայտչամիջոցների կիրառմամբ խոսողը, ակնկալելով լսողից ցանկալի պերլոկուտիվ արդյունք, իրականացնում է գիտակցված և նպատակաուղղված գործողություն, այն է՝ ուժեղացնել գեղագիտական ներազդեցությունը լսողի մտքերի և զգացմունքների վրա:

If I may introduce myself, I'm Mr. Chou's manager. [G. Greene, 160]  
“Well, if you'll excuse me, I'll go.” [Th. Dreiser, 50]

Խոսողական ակտ կառույցներում ստորադաս բաղադրիչն իրականացնում է հաղորդակցման գործընթացը կարգավորող մի շարք գործառնություններ՝ պատշաճության, համեմատության, մեկնական, որոնց գործաբանական վերլուծությունը հնարավորություն է տալիս բացահայտելու ստորադաս բաղադրիչի միևնույն գործառնության հնարավոր դրսևորումներն ու մեկնաբանությունները:

Համեմատության գործառնություն օժտված կառույցներում կարող են ձևավորվել հետևյալ հարաբերությունները՝ համարժեքության, անհամարժեքության, համեմատությունն աստիճանավորող, հարափոխաբերական և հարատարածական:

- համարժեք հարաբերություն  
“If my husband has no future,” she said, “then nor do my children.” [COB-W]
- անհամարժեք հարաբերություն  
If I've had a successful career, I've been a complete failure as far as my private life is concerned. [COB-W]
- համարժեք և անհամարժեք հարաբերություն  
If you are saved, your child is saved too; if you are lost, your child is still saved. [Ch. Dickens, G.E., 413]
- համեմատությունն աստիճանավորող հարաբերություն  
If I adored her before, I now doubly adore her. [Ch. Dickens, G.E., 248]
- հարափոխաբերական

If the Cite' is the heart of Paris, the Latin Quarter is its soul. [COB-W]

Այս նախադասության մեջ փոխաբերության բնույթ ունեն ոչ միայն «heart» և «soul» գոյականները, որոնք, անշունչ օբյեկտին վերագրվելով և համապատասխան իմաստույթն իրենց մեջ ընդունելով, փոխադրվում են շնչավորի տիրույթից անշունչի տիրույթը, այլև, համապատասխանորեն, «Paris» գոյականը, որն անձնավորվում է, փոխ է առնում շնչավորության իմաստույթը, փոխում է իր իմաստաբանական բնագավառը հակառակ ուղղությամբ (Փարիզը շնչավոր էակի նման ունի սիրտ և հոգի):

հատկորոշելու խոսողի կողմից ներկայացված պայմանական տարածքի տեսակը, համաձայն որի էլ ստորադաս և գերադաս բաղադրիչների միջև ձևավորվում են տարբեր իմաստային հարաբերություններ: Գլուխը բաղկացած է երկու ենթագլխից:

**Երրորդ գլխի առաջին ենթագլուխը («Բուն պայման հատկորոշող ստորադասով կառույցներ»)** քննության է առնում առկայացնող և հետևության հիմունք հատկորոշող պայմանական կառույցները: Առկայացնող պայմանական կառույցները կառուցվածքային և իմաստային ընդհանրություններ ունենալու հետ մեկտեղ առանձնանում են ստորադաս և գերադաս բաղադրիչների իմաստային ներքին կապով, որը հիմնականում կարող է լինել պատճառական, նպաստող, խոչընդոտող և չխոչընդոտող: Գործաբանական տեսանկյունից առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում առկայացնող կառույցների խոչընդոտող և չխոչընդոտող իմաստային հարաբերությունները: Խոչընդոտող իմաստային հարաբերություն արտահայտող կառույցներն երբեմն կարող են լինել երկիմաստ: Օրինակ՝

(21) If it freezes, the contest will not be cancelled. [COB-W]

Այս նախադասությունն ունի երկու հնարավոր մեկնաբանություն՝ պայմանավորված անցկացվող մրցույթի բնույթով:

(21') Գիշտ չէ, որ ցուրտ եղանակը կխոչընդոտի մրցույթի անցկացմանը:

(ըմբշամարտի մրցույթ)

(21'') Ցուրտ եղանակը կնպաստի մրցույթի իրականացմանը:

(գեղասահքի մրցույթ)

Ըստ առաջին մեկնաբանության՝ սառնամանիքը չի խոչընդոտի դրսում անցկացվող ըմբշամարտի անցկացմանը, այսինքն՝ մրցույթը չի հետաձգվի ցուրտ եղանակի պատճառով: Իսկ ըստ երկրորդ մեկնաբանության՝ ցուրտ կլիմայական պայմաններն, ընդհակառակը, կնպաստեն մրցույթի իրականացմանը, եթե խոսքը վերաբերում է չմշկավազքի կամ գեղասահքի մրցույթին: Սենք գտնում ենք, որ նախադասության այս երկու տարբեր մեկնաբանությունները հնարավոր են դառնում միայն գործաբանական տեսանկյունից, որը պայմանավորված է առաջին հերթին ժխտման գործաբանական երկիմաստությամբ՝ հարալեզվական կամ արտաքին և նկարագրական: Նախադասության առաջին մեկնաբանության մեջ ժխտումը հարալեզվական է և վերաբերում է ոչ թե գերադաս բաղադրիչին միայն, այլ ամբողջ նախադասությանը, որի արդյունքում ստորադաս բաղադրիչը պահպանում է իր խոչընդոտող գործառնությունը: Սակայն նույնը չենք կարող ասել նախադասության երկրորդ մեկնաբանության մասին, որում ժխտումը նկարագրական է և վերաբերում է միայն գերադաս բաղադրիչին: Արդյունքում

ստորադաս բաղադրիչը չի պահպանում իր խոչընդոտող գործառնությունը և դառնում է չխոչընդոտող, նույնիսկ նպաստող:

Հետևության հիմունքը հատկորոշող պայմանի պարագա ստորադաս բաղադրիչը ցույց է տալիս այն գործողությունը, եղելությունը, որ ծառայում է որպես տրամաբանական հիմունք գերադաս բաղադրիչում արտահայտված հետևության կամ դատողության համար: Ուղղակի հետևության հիմունքը հատկորոշող կառույցներում ստորադաս և գերադաս բաղադրիչների միջև հիմնականում ձևավորվում են հետևյալ իմաստային հարաբերությունները՝ սահմանափակող, զիջական, էպիստեմիկ և շրջուն պատճառահետևանքային:

Գործաբանական տեսանկյունից մեծ հետաքրքրություն են ներկայացնում էպիստեմիկ հարաբերություն արտահայտող կառույցները, որոնց գործաբանական առանձնահատկությունները պայմանավորված են նրանով, թե տարբեր խոսույթներում ինչ չափով է դրսևորվում խոսողի համոզմունքը կամ ենթադրությունը ստորադաս բաղադրիչի գործողության իսկության վերաբերյալ: Օրինակ՝

A: I just went by her house, and the light was on.

B: Oh, if the light's on, then she must be in. [COB-S]

Բերված օրինակից երևում է, որ խոսողը (B) բոլորովին չի կասկածում իր խոսակցի (A) ասածի ճշտությանը, ընդհակառակը, նա լիովին համոզված է, որ իր զրուցակիցն իսկապես անցել է այդ տան մոտով և տեսել, որ տան լույսը վառվում է: Այլ կերպ՝ խոսողը ստորադասի գործողությունն ընդունում է որպես օբյեկտիվ իրողություն: Իսկ ստորև բերված օրինակում խոսողը՝ ընդունելով իր մասին եղած կարծիքը որպես ճշմարտություն, ինքնաքննադատորեն հաստատում է այն գերադաս բաղադրիչում:

“Never mind what people think, my child. Sooner or later one's got to face that anyway.” “It's you who aren't facing it. If I'm not thought nice, I can't be nice.”

[J. Galsworthy, 43]

Սակայն նկատի ունենալով, որ նախադրյալ-հետևություն հարաբերությունը լիովին կախյալ հարաբերություն է, խոսողի համոզվածության աստիճանը, խոսքային իրադրությունից կախված, կարող է աստիճանաբար նվազել, ինչպես օրինակ՝

Somewhere in the tower and the fields I had lost my keys, but I had sent a message to Phuong which she must have received if she was still there – that “if” was the measure of my uncertainty. [G. Greene, 145]

Նախադասության վերջում «if» շաղկապի կրկնությունը ընդգծում է խոսողի՝ գերադաս բաղադրիչում նշված գործողության իսկության նկատմամբ ցուցաբերած նվազող համոզվածությունն ու աճող անորոշությունը:

Յուրահատուկ արտահայտչականություն և սաստկական արժեք է ստանում կառույցը, երբ նկարագրվող պայմանի անիրական, իրականությանն անհամապատասխան լինելն ապացուցելու համար գլխավոր նախադասության մեջ նրան հակադրվում է մի անիրագործելի ենթադրություն, ինչպես՝

A: I am tired.

B: If you are tired, I'm almost dead. [COB-S]

Այս կառույցով արտահայտվում է թերահավատություն նշված իրողության նկատմամբ. խոսողը կամ բոլորովին չի ընդունում խոսակցի հոգնած լինելու փաստը, կամ ընդունում է որոշ վերապահումներով: Իսկ ստորև բերված օրինակում խոսողն այնքան էլ համոզված չէ խոսակցի կրթված լինելու մեջ:

Now, if you are an educated man, as you claim, perhaps you can tell me the Latin word for “this”. [F. Scott Fitzgerald, B.J.S., 102]

Անուղղակի հետևության հիմունքը հատկորոշող կառույցը կառուցվածքային տեսակետից չի տարբերվում ուղղակի հետևության հիմունքը հատկորոշող կառույցից, սակայն այս կառույցի հիմնական և էական իմաստագործառնական առանձնահատկությունն այն է, որ հետևությունն ընթանում է երկու ողողությամբ՝ ստորադասից գերադաս շարահյուսական մակարդակում և գերադասից ստորադաս դատողական մակարդակում:

I may be hanged if that isn't Tom. [COB-W]

**Երրորդ գլխի երկրորդ ենթագլուխը («Բուն պայման չհատկորոշող ստորադասով կառույցներ»)** քննության է առնում խոսողական ակտ պայմանական կառույցները: Խոսողական ակտ պայմանական կառույցների ստորադաս բաղադրիչները, որոնք բնորոշվում են մի շարք իմաստային առանձնահատկություններով և ոճական երանգներով, խոսքին հաղորդում են քաղաքավարություն, զգուշավորություն, նրբանկատություն, պատշաճություն, թույլ արտահայտված իմացություն և խոսակցին տալիս են մեծ հնարավորություն արտահայտելու իր սեփական վերաբերմունքը գերադաս բաղադրիչում արտահայտված գործողության կամ եղելության հանդեպ: Ձարմանալի չէ, որ Աթայանը հաղորդակցական ակտը ձևական տեսանկյունից կոչում է «քաղաքավարությամբ»: Իսկ Լակոֆը գրում է, որ խնամքով և ճիշտ ընտրված պայմանը հաղորդակցմանը հաղորդում է փոխըմբռնման «գեղարվեստական» երանգավորում: Նման «հռետորական» ոճով օժտված պայմանը իրականացնում է ներգործման և հաղորդման գործառնությամբ և բնութագրվում է խոսքում պատրաստի վերարտադրվող կայուն արտահայտությունների լայն կիրառմամբ, շարահյուսական ձևերի հարստությամբ, ինչպես նաև լեզվական միջոցների ոճական գործածության